www.police.am
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի և լրատվության վարչություն
էլ. փոստ press@police.am, Հեռ. 011-56-02-63, 011-54-73-14

25/389 22.11.2016 թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
Հասարակական կազմակերպության նախագահ
Լիանա Դոյդոյանին

Ձեր 17.11.2016 թ. հարցմանն ի պատասխան ստորև ներկայացվում են հետևյալ պատասխանները.

ՀՀ ոստիկանության ծառայողների (աշխատողների) պարգևատրումները վճարվում են «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 10-րդ մասի, ինչպես նաև **ՀՀ կառավարության 2014թ.-ի հուլիսի 3-ի «Պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց վարձատրության մասին» N 737-Ն որոշման 3-րդ կետի հիման վրա:**

Ըստ այդմ, 2016թ. հունվարի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության գլխավոր, ավագ, միջին, կրտսեր խմբերի ծառայողներին, քաղաքացիական հատուկ ծառայողներին, **քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց վճարված դրամական պարգևատրումների ընդհանուր գումարը կազմել է.**

1) «Հասարակական կարգի պահպանության ապահովում>> ծրագրով հատկացվող միջոցների հաշվին՝ 1.866.234,1 հազ. դրամ,

2) «ՀՀ պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների շենքերի և շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանություն» ծրագրով հատկացվող միջոցների հաշվին՝ 215.588,1 հազ. դրամ:

Բացի այդ, նշված ժամանակահատվածում ոստիկանության ծառայողները (աշխատողները) պարգևատրվել են նաև ժամայցույց (31 հատ, 3.596,0 հազ. դրամ ընդհանուր գումարով) և հեռուստացույց (70 հատ, 8.316,0 հազ. դրամ ընդհանուր գումարով) հուշանվերներով:

Ընթացիկ տարվա 10 ամսում դրամական պարգևատրում են ստացել ոստիկանության ծառայողների (աշխատողների) ընդհանուր թվի շուրջ 58 %-ը (բացարձակ թիվը հրապարակման ենթակա չէ, քանի որ ոստիկանության թվաքանակը ՀՀ կառավարության 2002 թ. դեկտեմբերի 19-ի թիվ 2069-ՆԳ որոշմամբ գաղտնի է):

ՀՀ ոստիկանության ՖՎ